№ 1112/2110-21
25.01.2021

Երևան, Փավստոս Բուզանդի փող.,1/3, 4-րդ հարկ,
հեռ.՝ 091407836, էլ. հասցե՝ foi@foi.am
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի
նախագահ Շուշան Դոյդոյանին

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան հունվարի 21-ին ուղարկված հարցման՝ տեղեկացնում ենք, որ 2020թ. ընթացքում արտաքին գործերի նախարարության կողմից հարցումների պատասխանների տրամադրման ամբողջական մերժման դեպքեր չեն եղել: Երկու դեպքում հարցումների պատասխանները տրամադրվել են մասնակիորեն.

1. լրատվամիջոցը հայցել էր անձնավորված ձևով տրամադրել ԱԳՆ բոլոր աշխատակիցների ստացած պարգևավճարների վերաբերյալ տեղեկատվությունը: Լրատվամիջոցին տրամադրվել էր հստակ տեղեկատվության ԱԳՆ աշխատակիցներին տրամադրված պարգևավճարների ընդհանուր չափի վերաբերյալ՝ առանց տրամադրելու հայտարարատու չհանդիսացող աշխատակիցների անձնավորված տվյալները՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի դրույթների համաձայն;

2. լրատվամիջոցը հայցել էր 2018թ. մայիսից ԱԳՆ կողմից տրամադրված դիվանագիտական անձնագրերի քանակի վերաբերյալ տեղեկատվություն՝ խնդրելով անձնավորված տրամադրել անվանական տեղեկություններ, թե ովքեր են ստացել նշված անձնագրերը: Լրատվամիջոցին հայտնվել է տրամադրված անձնագրերի քանակի մասին տեղեկություններ, իսկ դրանք ստացած պաշտոնյաների մասին անվանական տեղեկութունների տրամադրումը մերժվել է՝ համաձայն ՀՀ արտաքին գործերի նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու մասին ԱԳՆ նախարարի Հր. 1002-Ն հրամանի հավելվածի 11-րդ կետի:

Հարգանքով՝

Recoverable Signature

X

ՍԵՐՈԲ ԲԵՋԱՆՅԱՆ

Signed by: BEJANYAN SEROB 3912720061

Սերոբ Բեջանյան
Լրատվության և հանրային դիվանագիտության
վարչության պետ

Լրատվամիջոցների հետ կապի և հանրային դիվանագիտության բաժին
հեռ.՝ 060 620 202